# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 221 (24502), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٥۰۲) ۲۲۱ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԵՔՇԱԲԹԻ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023

سه شنبه – ۹ آبان ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی




Տիգրան Աբրահամեան.

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ԱՆՀՆԱՐ Է ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ, ՈՐ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ ԴՈՒՐՍ ԿԸ ԳԱՅ»

«ԱԼԻՔ» - Խաղաղութիւն, որեւէ կերպով այս տարածաշրջանում՝ Հարաւային Կովկասում նկատելի չէ, իրավիճակը նաեւ լարուած է մեծ ռեգիոնում, որը պայմանաւորուած է Իսրայէլ-Պաղեստին նոր պատերազմով: Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յայտնեց ռազմական փորձագէտ Տիգրան Աբրահամեանը:

Տիգրան Աբրահամեանի խօսքով, Թուրքիայից եւ Ադրբեջանից եկող ազդանշանները ցոյց են տալիս, այդ երկրների համար խաղաղութիւնը միայն կը լինի մէկ դէպքում, երբ որ նրանց ամբողջական օրակարգը, որը իջեցւում է Հայաստանի իշխանութիւններին, իրականութիւն կը դառնայ, որը նոյնիսկ չի երաշխաւորում խաղաղութիւն:

«Այնպէս, որ այս պահին խաղաղութեան մասին պատկերացումները տարբեր են, մի կողմից՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի, միւս կողմից՝ Հայաստանի համար»,- նշեց նա:

Տիգրան Աբրահամեանի համոզմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ անընդհատ խօսւում է, որ մինչեւ տարեվերջ խաղաղութեան պայմանագիր է կնքւելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, սակայն, ակնյայտ է, որ այն կարող է լինել մէկ դէպքում, այսինքն Հայաստանը տայ Ադրբեջանին այն, ինչը Ադրբեջանը ցանկանում է տարածքային իմաստով, եւ աչք փակի այն տարածքների նկատմամբ, որտեղ Ադրբեջանը վերահսկողութիւն է ապահովել վերջին տարիներին Հայաստանի դէմ իրականացւած ագրեսիայի ժամանակ:

Ըստ Աբրահամեանի՝ նոյնիսկ այդ փաստաթուղթը, որը ստացել է «խաղաղութեան» պայմանագիր անւանումը շատ յարաբերական կարելի է խաղաղութիւն համարել: Այն Ադրբեջանի համար միգուցէ խաղաղութիւն է, բայց Հայաաանի համար նոր կորուստներ:

Անդրադառնալով Արցախի հարցն օրակարգում պահելուն Տիգրան Աբրահամեանը նշեց, որ շատ կարեւոր է գիտակցել, որ Հայաստանի իշխանութիւնները այդ հարցի նկատմամբ ինչ դիրքորոշումներ ունեն, եւ այդ հարցերի հետ կապւած, ինչ միջազգային ջանքեր են գործադրում:

Պատասխանելով հարցմանը, թէ ինչպէ՞ս է պատկերացնում Արցախի նախագահի դիտարկումը, որ յաջորդ քայլը պէտք է լինի այն, որ սկսենք, զբաղւել Արցախից տեղահանւած մեր քաղաքացիների յետ վերադարձով, Աբրահամեանը յիշեցրեց, որ Հայաստանի իշխանութիւնները Արցախը ճանաչել են Ադրբեջանի կազմում, եւ, բնականաբար, նման իրավիճակում, առանց Հայաստանի գործուն մասնակցութեան եւ աջակցութեան դժւար է պատկերացնել արցախցիների այնպիսի կարգավիճակով վերադարձը իրենց հայրենի բնօրրան, որը կարող է նրանց անվտանգութիւնն ապահովել,

(Շար. 8-րդ էջում)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսը ընդունել է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցչին



Հոկտեմբերի 30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին է այցելել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանը, ընկերակցութեամբ ՀՅԴ Բիւրոյի անդամ դոկտոր Մկրտիչ Մկրտչեանի:

Հանդիպման ընթացքում քննարկւել են Հայաստանի ներքին կացութեանը, Արցախի ճգնաժամի հետեւանքներին եւ Սփիւռքին առնչւող մի շարք խնդիրներ:

**«Arfd.am»**

# Ադրբեջանցիները Արցախի ԱԺ շէնքից պոկել են գերբը

Արցախցի հասարակական-քաղաքական գործիչ Արշակ Աբրահամեանը յայտնում է, որ օկուպացւած Արցախի ԱԺ շէնքից պոկել են գերբը, ինչպէս նաեւ քանդել են «ԱՐՑԱԽԲԱՆԿ»-ի հայերէն տառերը:

**«Yerkir.am»**





Ամիր Աբդոլլահեան.

# «ԱՄՆ-ի դէմ յարձակումները Իրանին վերագրելը անհիմն է»



«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարար Հուսէյն Ամիր Աբդոլլահեանը կատարելապէս անհիմն է անւանել սիոնիստական ռեժիմի դէմ Պաղեստինի Դիմադրութեան խմբերի հոկտեմբերի 7-ին մեկնարկած գործողութեանը Իրանի դերակատարութեան մասին յայտարարութիւնը:

ԻՌՆԱ-ի համաձայն՝ Իրանի ԱԳ նախարարը Նիւ Եորքում « CNN» հեռուստաալիքի հետ հարցազրոյցում է ընդգծել է. «Իրանը գործողութեան մասին տեղեակ չի եղել, եւ պաղեստինցիներն են կապ հաստատել: Իրանը չունի որեւէ խումբ Պաղեստինում, եւ չի վարել միջնորդաւորուած պատերազմ: Իսրայէլն է ԱՄՆ-ի վստահւած ուժը տարածաշրջանում, որը տարածաշրջանն անապահով է դարձրել»:

Նա նշել է. «Անտարակոյս աջակցում ենք Պաղեստինը:Միշտ էլ քաղաքական, մեդիա եւ միջազգային աջակցութիւն ենք ցուցաբերել Պաղեստինին, եւ երբեւէ չենք ժխտում դա: Դա իրականութիւն է»:

Ամիր Աբդոլլահեանն ընդգծել է. «Երբ տարածաշրջանում որեւէ յարձակում է իրականացւում, կամ որեւէ խմբի կողմից թիրախաւորւում է ԱՄՆ-ի շահերը, դրանք վերագրել Իրանի Իսլամական Հանրապետութեանն առանց որեւէ ապացոյց ներկայացնելու, կատարելապէս

(Շար. 8-րդ էջում)

Իրանցի փորձագէտի նոր ահազանգը՝

# «Գազայի գազից կախուած ճակատագիրը եւ Կովկասի աշխարհաքաղաքական քարտէզի գազային լուծումը»

«ԱԼԻՔ» - Դոկտ. Ահմադ Քազեմին իր «X»-ի միկրոբլոգում վերահրապարակելով 2006 թւականին արւած լուսանկարը փորձել է յիշեցնել, որ նման նախագծերի մասին յայտարարութիւններին մատների արանքով նայելը սխալ կը լինէր:

Փաստը մնում է փաստ, որ տարածաշրջանում տեղի ունեցած իշխանափոխութիւններն ու զարգացումները, տարածքային փոփոխութիւններն ու նոր տարածքային պահանջները իրականում ընթացք են ստանում միջազգային նշանակութիւն ունեցող այդօրինակ նախագծերի համատեքստում:

Փորձագէտն ընդգծել է սիոնիստական ռեժիմին սնող Բաքու-Թիֆլիս-Ջէյհան նաւթամուղի կարեւորութիւնը, որով էլ պայմանաւորւած է այն ռազմավարական նշանակութիւնը, ինչ ստացել է Կովկասը՝ այլընտրանքային տարանցիկ գօտի դառնալով էներգակիրների առումով:

Քազեմին նշել է. «Սա Ալիֆ-Էրդողանի յայտնի խողովակաշարն է Իրանի եւ Հայաստանի միջեւ սահմանի վերացման հետ մէկտեղ:

2006 թւականից ցայսօր նաւթը Ջէյհունից տեղափոխւում է Հայֆա նաւահանգիստ, այնտեղից էլ մատակարարւում սիոնիստներին՝ ծածկելով նրանց պահանջարկի 70%-ը»:

(Շար. 8-րդ էջում)




## Մեր օրերի համար

*«Հայ ժողովուրդն այսօր լուռ է, ինչպէս որ հարկադրւած էր լռել Գոլիցինների եւ Աբդուլ Համիդիների ռեժիմի տակ, բայց նրա հոգում միշտ վառ է ազատութեան անմար կանթեղը՝ պատրաստ իր հրդեհի հուժկու բոցերով լափելու բոլոր նրանց, ովքեր շղթաների մէջ են պահում Հայաստանը»,-*

***Սիմոն Վրացեան,***

***հատւած՝ «Կանթեղը վառ է» յօդւածից, որ հրատարակւել է Փիլիպէի «Հայաստան» թերթի թիւ 318 համարում, 31 մայիսի 1922թ.***




ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Լիլիթ Գալստեան.

## «SOS! Հացադուլ եւ դեղադուլ Նուբարաշէն ՔԿՀ-ում»

*Շաբաթավերջին գործընկերներիս հետ այցելեցինք Նուբարաշէն քրէակատարողական հիմնարկ՝ տեսակցելու անկեղծօրէն քաղաքական դրդապատճառներով կալանաւորուած ՀՀ քաղաքացիներին:*

*Սեպտեմբերի 19-ի եւ 20-ի դէպքերով երկամսեայ կալանքի ռեժիմում գտնուող Ա. Ա-ին տեսնել չկարողացանք. պարզւեց վերջինս մեկուսացման մէջ է: Ըստ մեզ հասած հաւաստի տեղեկութիւնների՝ նրա առողջական վիճակը մեկուսացում է ենթադրում, նաեւ յատուկ բուժման ընթացք պահանջում:*

*Բնականաբար, քրէակատարողական հիմնարկի պայմաններն անհամատեղելի են տեւալ հիւանդութեան հետ:*

*ՆԵՐԿԱՅՈՒՄՍ Ա. Ա-ն ՀԱՑԱԴՈՒԼ եւ ԴԵՂԱԴՈՒԼ Է ՅԱՅՏԱՐԱՐԵԼ, ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԻ ՅԱՆԳԵՑՆԵԼ:*

*Հաշւի առնելով հանգամանքը, որ Ա. Ա-ի հիւանդութիւնն անհամատեղելի է կալանքի հետ, ես եւ պատգամաւոր Արման Ղազարեանը դիմել ենք ՀՀ ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻՆ, ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ, ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԳԻՇՏԻ ՔԱՐԱՄԵԱՆԻՆ՝ առաջարկելով քննարկման առարկայ դարձնել խափանման միջոցի փոփոխման հարցը:*

*Դէ, տեսնենք, թէ հերթական անգամ ինչպիսին է իրաւապաշտպան ՀԿ-ների արձագանքը...*



ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏԵԱՆ
ՀՅԴ Գերագոյն մարմնի անդամ,
ՀՀ ԱԺ «Հայաստան»
խմբակցութեան պատգամաւոր

Գեներալ լէյտենանտ Սալամի.

## «Հոկտեմբերի 7-ին սիոնիստական ռեժիմը ամենամեծ պարտութիւնը կրեց»




*«ԱԼԻՔ» - Իսլամական յեղափոխութեան Պահակազօրի կորպուսի (ԻՅՊԿ)-ի գլխաւոր հրամանատար գեներալ-լէյտենանտ Սալամին նշելով, որ սիոնիստական ռեժիմի ամենամեծ պարտութիւնը տեղի է ունեցել հոկտեմբերի 7-ին, - յայտնել է, որ «Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութեան մեկնարկով փլուզւեցին սիոնիստական ռեժիմի բոլոր պատկերացումները՝ անվտանգութեան ապարատի ստւերում ամէն ինչ վերահսկելու մասին:*

*«Parstoday»-ի համաձայն՝ Գեներալ Սալամին ասել է, որ սիոնիստները ենթադրում էին, որ ունեն անվտանգութեան բարդ կառոյց, որը վերահսկում է ամէն ինչ, եւ իւրաքանչիւր շարժում նրանց աչքից չի վրիպում, բայց հոկտեմբերի 7-ին այս բոլոր ենթադրութիւնները փլուզւեցին:*

*Յայտարարելով, որ օկուպացուած Պաղեստինը ոչ արդարացի կերպով կոչւում է Իսրայէլ, ԻՅՊԿ-ի գլխաւոր հրամանատարը հաւաստիացրել է, որ այդ տարածքում հիմնականում ներգաղթեալներ են, եւ չկայ իսրայէլական ինքնութիւն:*

*Գեներալ Սալամին ընդգծելով, որ սիոնիստական ռեժիմը որքան էլ ռմբակոծի, Գազայի երեխաները չեն յանձնւելու, ասել է.«Գազայի երեխաներն ասում են, որ այստեղ մեր հողն ու ինքնութիւնն է, եւ մեր մօտեցումը տարբերւում է այն մարդկանցից, ովքեր եկել են այս երկիր հարստութիւն դիզելու համար»:*

Աւետիք Իշխանեան.

## «Քանի դեռ Բաքւի զնդաններում տառապում են մեր գերի-պատանդները ՀՀ իշխանութիւնը թշնամու հետ բանակցութիւններ վարելու իրաւունք չունի»



*Յուզմունքից մարդ գժւում է՝ խմանալով, որ արցախցի փախստական, անչափահաս Սամուէլ Միրզոյեանը գտնւում է կալանքի տակ: Բա միւս մի քանի տասնեակ քաղբանտարկեալնե՞րը: Այս մասին գրում է իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանը:*

*«Ամօթ եւ խայտառակութիւն է ունենալ նման՝ թշնամուն պարտւած, սեփական ժողովրդին հալածող գարշապետութիւն եւ լինել դրա քաղաքացի:*

*Իմ համոզմամբ, քանի դեռ Բաքւի զնդաններում տառապում են մեր գերի-պատանդները, Հայաստանի իշխանութիւնն իրաւունք չունի թշնամու հետ բանակցութիւններ վարելու: Յարգելի՛ ընդդիմադիրներ, չէ՞ք կարծում, որ նոյն տրամաբանութեամբ, քանի դեռ Հայաստանի բանտերում առկայ են քաղբանտարկեալներ, պէտք է բացառել ցանկացած շփում դաւաղիր իշխանութեան հետ, այդ թւում՝ Ազգային ժողովում»:*

**«Yerkir.am»**

Կարէն Իգիթեան.

## «Ադրբեջանը Հայաստանի սահմանների մօտ դիրքեր է կառուցում. պատրաստւում են ռազմական գործողութիւնների»



*Օրերս Եւրոպայի խորհրդի նիստում ԵՄ առաջնորդները, դիմելով Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդներին, կոչ արեցին բարեխղճօրէն մասնակցել բրիւսէլեան ձեւաչափով բանակցութիւններին եւ գործընթացը մինչեւ տարեվերջ հասցնել աւարտին:*

*Ուշագրաւ է, որ, թէեւ բանակցութիւններից արդէն երկրորդ անգամ հրաժարւում է մասնակցել ադրբեջանական կողմը (Ալիեւը նախ չմասնակցեց Գրանադայում կայացած հանդիպմանը, ապա հրաժարւեց նաեւ հոկտեմբերի վերջին Բրիւսէլում նախատեսուած հանդիպումից), սակայն, ԵՄ-ն կոչ արեց ոչ թէ հասցէական Ադրբեջանին, այլ՝ նաեւ Հայաստանին՝ յոյս ունենալով մինչեւ տարեվերջ հասնել որեւէ փաստաթղթի ստորագրման:*

*«168 TV»-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում Տարածաշրջանային հարցերով փորձագէտ, «Հայկական նախագծի» համահիմնադիր Կարէն Իգիթեանն անիրատեսական համարեց Ադրբեջանի հետ որեւէ փաստաթղթի ստորագրումն ու խաղաղութեան հաստատումը, որովհետեւ, ըստ նրա, Ադրբեջանը Արցախի սահմանին կանգնած իր զօրքը, Արցախն ամբողջութեամբ օկուպացնելուց յետոյ, տեղակայում է Հայաստանի հետ սահմանին եւ ցանկանում Հայաստանը մաս-մաս ուտել:*

*«Ադրբեջանը Հայաստանի սահմանների մօտ զօրամասերի համար դիրքեր է կառուցում: Նրանք պատրաստւում են ռազմական գործողութիւնների՝ ընդդէմ Հայաստանի: Ալիեւը բրիւսէլեան հարթակից ստացել է այն, ինչ ուզում էր՝ Փաշինեանն Ադրբեջանի մաս է ճանաչել ինչպէս ամբողջ Արցախը, այնպէս էլ՝ Հայաստանից, այսպէս կոչւած, անկլաւները, ուստի դա անելով՝ Ալիեւին տւել է առիթ ինչ-որ ժամանակ անց յայտարարել, թէ իր տարածքներն է սկսում ազատագրել՝ ցոյց տալով Փաշինեանի յայտարարութիւնները՝ որպէս ագրեսիան արդարացնող հիմնաւորում: Ի դէպ, Ալիեւը չի բաւարարւելու միայն այդ տարածքներով»,- ասաց Իգիթեանը՝ շեշտելով՝ ռազմական գործողութիւնները կանխարգելող գործօն չի կարող լինել մինչեւ տարեվերջ խաղաղութեան պայմանագրի ստորագրման ձգտող Եւրոմիութիւնը նաեւ այն պատճառով, որ նա իր դիտորդներին պատերազմի ժամանակ պարզապէս ռազմական գործողութիւնների վայրից կը հեռացնի:*

*Իգիթեանը յիշեցրեց, թէ ինչպէս ԵՄ-ն ՄԱԿ մանդատով օժտւած խաղաղապահներին հեռացրեց Սիրիայից, երբ Սիրիայում ահաբեկիչներն անցան ռազմական գործողութիւնների:*

*Տարածաշրջանային հարցերով փորձագէտի խօսքով՝ ի տարբերութիւն ԱՄՆ-ի կամ աշխարհաքաղաքական այլ կենտրոնի, որոնք ունեն յստակ ազգային շահեր եւ Հայաստանի հետ յարաբերւում են՝ ելնելով իրենց ազգային շահերից, Փաշինեանն անում է ճիշտ հակառակը՝ Հայաստանի շահերը մաս-մաս ծախում է այդ կենտրոններին՝ յանուն սեփական իշխանութեան պահպանման:*

*«Փաշինեանի կառավարութիւնը շատ վատ ճանապարհ է ընտրել, Հայաստանի ինքնիշխանութիւնը մաս-մաս ծախում է, իսկ սա տանում է դէպի Հայաստանի սիրիացում... Սիւնիքում պատերազմի վտանգը մեծ է: Ադրբեջանն ու Թուրքիան ունեն իրենց նպատակները, եւ դրանք ամրագրւած են Ալեքսանդրապոլի եւ Բաթումի պայմանագրերով, ուստի պէտք է հասկանալ, որ գործելու են Ադրբեջանն ու Թուրքիան, իսկ մնացած երկրները լինելու են արձագանգողի դերում՝ փորձելով իրենց օգուտները քաղել այդ վիճակից»,- ասաց Իգիթեանը:*

Տիգրան Վարդանեան.

## «Իշխանութիւնը զաւթած թափթփուկները հիմա էլ Սամուէլ Շահրամեանին են մեղադրում»



*Տիգրան Վարդանեանը գրում է. «Իշխանութիւնը զաւթած թափթփուկները հիմա էլ Սամուէլ Շահրամեանին են մեղադրում: Թէ բա կապիտուլիացիա է ստորագրել, թէ բա զանգ կոտրող էր, թող կապիտուլիացիա չստորագրեր, թէ բա Արցախն ա յանձնել...*

*Էս թուրքի դրածոները, երբ ասում են կապիտուլիացիա, երեւի թէ մոռանում են 2020 թ. նոյեմբերի 9-ի փաստաթուղթը՝ կապիտուլիացիոն ակտը: Մոռանում են, որ այդ փաստաթղթով, այսինքն գրչի մէկ հարւածով՝ մի քանի անգամ աւելի շատ տարածք զիջւեց, քան թէ 44-օրեայ ընթացքում թշնամին կարողացաւ գրաւել:*

*Սրանք, երեւի չեն յիշում, որ իրենց անբարոյականի վաստակն էր յայտարարում, թէ Սեւ լճի 30%-ի համար չարժի կռւել: Սրանք մոռացել են, որ յանձնել են ստրատեգիական նշանակութիւն ունեցող բարձունքներ, ճանապարհներ: Երեւի մոռացել են, որ ադրբեջանցիները 2021 թ. մայիսի 12-ից օկուպացրել են ՀՀ սուվերեն տարածքը: Սրանք երեւի մոռացել են, որ այսօրւայ ՀՀ կառավարիչն է յայտարարել՝ ե՛ւ Բրիւսէլում, ե՛ւ Մոսկւայում, ե՛ւ Երեւանում, որ Արցախն Ադրբեջան է, իսկ յետոյ Պրագայում դա վերահաստատել, Գրանադայում էլ ստորագրել:*

*Շահրամանեանն էնքան թասիբ ունէր, որ ձեր յաճախորդ Բաբայեան Սամոյի աջակիցն իրան թուրք ա անւանում, իսկ մարդը հակադարձում ա զանգ կոտրելու արտայայտութեամբ: Բա չէ, պէտք ա Նիկոլի պէս կանգնէր ասէր, որ երբ իրեն թուրք են անւանում նա դրանից չի վիրաւորւում, հա՞: Չէ, հայը միշտ էլ վիրաւորւելու է նման պիտակաւորումից: Էդ դուք էք հոգով, էութեամբ, ապրելակերպով թուրք...*

*Արցախը յանձնել էք, դո՛ւք, 2018-2019 թթ. Վրաստանում բանագնացների միջոցով պայմանաւորւելով, բանակը կազմաքանդելով ու ներսից ջախջախելով, ռազմական պլանը փոխելով, լիֆտերում սիլիբիլի անելով ու բանակցային ողջ հայանպաստ կապիտալը ջուրը գցելով, նամակներ՝ վրան յստակ գումարի չափ նշւած ստանալով, Ալիեւին կիրթ ու կառուցողական համարելով, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջ պայման դնելով ու նրանց շանտաժ անելով, պատերազմ հրահրելով՝ Արցախը Հայաստան է ու վերջ գոռալով, պատերազմի ընթացքում բանակի համալրումը կանգնեցնելով, միտումնաւոր զինւորներին ու կամաւորներին սպանելով, պատերազմը առնւազն 3 անգամ չկանգնեցնելով, յետոյ 2020 թ. նոյեմբեր ու 2021 թ. յունւարին ոչ-հայանպաստ փաստաթղթեր ստորագրելով:*

*Ձեր սիրելի Նիկոլը, ձեր փոխմակը ու ձեզ իւրաքանչիւր քւէ տւածն ա յանձնել Արցախը: Ի դէպ՝ յստակ քառակուսի կիլոմետրեր նշելով:*

*Մենք ենք մեղաւոր, որ դուք քիչ չէ իշխանութեան էք, մի բան էլ խեղաթիւրմամբ էք զբաղւած, բայց դէ տեսանելի ապագայում կը տեսնենք՝ դուք էք վերջնական կործանում Հայաստանը, թէ՞ Հայաստանը՝ ձեզ:*

*Յ.Գ. Նախկինների ջէբը չկարողացան գցեն, անցան ռուսներին՝ չկարողացան, հիմա էլ Շահրամանեանի գրպանն են ուզում գցել: Ինչ ուզում էք արէք, միեւնոյն է կապիտուլիանտ, դաւաճան, հողատու բառերը փամփուշտի պէս դաջւած են ձեր ճակատներին: Պարզապէս մնում է ձեր ճակատներին կլորիկ փոս անել, որ «տեղաւորւի» այդ փամփուշտը»:*

**«168.am»**

# «Հայկական խաչմերուկից»՝ «Խաղաղութեան խաչմերուկ». Որքանո՞վ է այն հայկական եւ որքանո՞վ է այն բխում հայկական շահերից









Թբիլիսիում «Մետաքսի ճանապարհ» միջազգային համաժողովի ժամանակ Նիկոլ Փաշինեանն իր ելոյթում ներկայացրել է իր կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծն ու դրա սկզբունքները:

*«**Սկզբունք թիւ 1.*** Բոլոր ենթակառուցւածքները, ներառեալ՝ աւտոճանապարհները, երկաթուղիները, աւիաուղիները, խողովակաշարերը, մալուխները, էլեկտրահաղորդման գծերը գործում են այն երկրների ինքնիշխանութեան եւ իրաւազօրութեան ներքոյ, որոնց տարածքով անցնում են:

***Սկզբունք թիւ 2.*** Իւրաքանչիւր երկիր իր տարածքում իր պետական ինստիտուտների միջոցով իրականացնում է սահմանային եւ մաքսային հսկողութիւն, ինչպէս նաեւ ապահովում է ենթակառուցւածքների, ներառեալ՝ դրանցով բեռների, տրանսպորտային միջոցների, մարդկանց անցման անվտանգութիւնը: Ի դէպ, առաջիկայում Հայաստանի իրաւապահ համակարգում կը ստեղծւի յատուկ ստորաբաժանում, որի գործառոյթը կը լինի Հայաստանով անցնող միջազգային կոմունիկացիաների, դրանցով բեռների, տրանսպորտային միջոցների, մարդկանց անցման անվտանգութեան ապահովումը, իհարկէ, մեր Պարէկային ոստիկանութեան հետ համատեղ:

***Սկզբունք թիւ 3.*** Նշւած ենթակառուցւածքները կարող են օգտագործւել՝ ինչպէս միջազգային, այնպէս էլ՝ ներքին փոխադրումների համար:

***Սկզբունք թիւ 4.*** Բոլոր երկրները միմեանց ենթակառուցւածքներից օգտուում են հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքով: Հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքով կարող են իրականացւել սահմանային եւ մաքսային հսկողութեան ընթացակարգերի որոշակի պարզեցումներ»,- մանրամասնել է Փաշինեանը:

Այն, որ այս սկզբունքները ոչ միայն վտանգաւոր են, այլեւ ոչ իրատեսական, դա առանձին եւ մանրակրկիտ խօսակցութեան թեմա է:

Իսկ հիմա յիշենք, որ 2022 թւականի փետրւարի 17-ին Փաշինեանը կառավարութեան նիստին Հիւսիս-Հարաւ աւտոճանապարհի Սիսիան-Քաջարան հատւածի նախարարակաւորման մրցոյթի համատեքստում, որի նախագծի արժէքը մի քանի հարիւր միլիոն դոլար է, ներկայացրել էր Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք նախագծի մանրամասները, որն անւանել էր «Հայկական խաչմերուկ»:

«Այս մասշտաբի ներդրումային ծրագիր, ըստ էութեան, Հայաստանի անկախութեան պատմութեան մէջ չի իրականացւել: Ուզում եմ ասել, որ վերջին շրջանի մեր քննարկումների արդիւնքում, նկատի ունեմ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման թեման, Հիւսիս-Հարաւ նախագիծը, ըստ էութեան, մենք վերաձեւակերպել ենք եւ դարձրել ենք Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք նախագիծ:

Յոյս ունենք, որ մեծ տեմպերով այս նախագիծը կիրականացնենք: Ըստ էութեան, սա նշանակում է, որ այդ ճանապարհի ճիւղերից մէկը, նկատի ունեմ Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք, կամ եթէ կարճ ասենք՝ հայկական խաչմերուկի ճիւղերից մէկը, կը կապի հիւսիսը հարաւին, այսինքն, ըստ էութեան, Հայաստանի Հանրապետութիւնից դէպի Իրանի Իսլամական Հանրապետութիւն, միւս ճիւղը, ըստ էութեան, Ադրբեջան, Հայաստան եւ հետագայում՝ դէպի Նախիջեւան, Թուրքիա: Եւ մենք այս նախագիծը տեղաւորում ենք ահա այս ընդհանուր կոնտեքստում:

Պէտք է յոյս ունենալ, որ մինչեւ տարւայ վերջ արդէն կոնկրետ շինարարական ընկերութիւն կունենանք, որը կիրականացնի աշխատանքը: Իհարկէ, Արեւելք-Արեւմուտքի նախագծային հատւածն աւած չէ, բայց յընթացս քաղաքական պայմանաւորւածութիւնների եւ համաձայնութիւնների ձեռքբերման համատեքստում մենք շատ արագ կիրականացնենք նաեւ այդ հատւածը: Գիտէք նաեւ, որ մենք հիմա կոնկրետ աշխատանքներ ենք իրականացնում Երասխ-Ջուլֆա-Օրդուբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու հայկական հատւածի կառուցման համար: Ըստ էութեան, չնայած տեխնիկական եւ նախագծային աշխատանքներն արդէն մեկնարկել ենք, առաջիկայում յոյս ունենք, որ ձեռք բերւած պայմանաւորւածութիւնները կարձանագրւեն որեւէ փաստաթղթի տեսքով եւ արդէն նաեւ դէ իւրէ գործընթացն ամբողջ թափով կը ծաւալւի»:

Այդ ժամանակ ադրբեջանական վերլուծական եւ քաղաքագիտական շրջանակները՝ ի դէմս քաղաքագէտ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամաւոր Ռասիմ Մուսաբեկովի, արձագանգել էին Նիկոլ Փաշինեանի այս յայտարարութեանը եւ նշել, որ Փաշինեանը հերթական անգամ դիմում է մանիպուլիացիայի, այնպէս, ինչպէս ժամանակին վստահեցնում էր, որ հնարաւոր է հասնել ղարաբաղեան հարցի այնպիսի լուծման, որն ընդունելի կը լինի Արցախի, Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդների համար:

«Անլուրջ փաշինեանական գաղափար, որը ոչ այլ ինչ էր, քան էժան պոպուլիզմ: Ոչ մէկի մօտ այն ոգեւորութիւն չառաջացրեց, քանի որ բոլորը հասկանում էին՝ դա անիրատեսական է»,- գրել էր ադրբեջանական լրատւամիջոցներից մէկը՝ յիշեցնելով 2020 թ. փետրւարի 15-ին տեղի ունեցած Ալիեւ-Փաշինեան միւնխէնեան դեբատը:

Ինչ վերաբերում է «Զանգեզուրի միջանցք»-ին եւ Փաշինեանի նշած Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք նախագծին, լրատւամիջոցը նախ կրկնել էր՝ «Զանգեզուրի միջանցք»-ը ադրբեջանական նախաձեռնութիւն է, եւ յաւելել, թէ փորձել են վիզուալ պատկերացնել՝ որտեղ կարող է «տեղակայւել» «հայկական խաչմերուկը», բայց ոչ մի բան չի ստացւել, եւ դիմել են քարտէզի օգնութեանը:

««Զանգեզուրի միջանցք»-ը, որը ձգւում է Ադրբեջանի արեւմտեան շրջաններից դէպի Նախիջեւան, եւ յետոյ՝ Թուրքիա, իրականում հատւում է երկաթուղային գծի հետ, որը կարող է միանալ նախագծին: Բայց սա ոչ թէ ՀՀ տարածքում, այլ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան: Բանն այն է, որ Հայաստան-Իրան երկաթգիծը (նախագծի հայկական հատւածը) անցնում է Նախիջեւանի տարածքով: Այդ գիծը գոյութիւն ունէր դեռ խորհրդային ժամանակներից եւ դադարել է գործել պատերազմը սկսւելուց յետոյ: Բայց, ի տարբերութիւն Զանգեզուրով անցնող ճանապարհի, այն հիմնականում պահպանւել է: ՀՀ-ում վստահ են, որ այս ճանապարհներով շարժը հնարաւոր է վերականգնել առաւելագոյնը մէկ տարում: Բայց սա՝ եթէ խօսքը երկաթգծային ճանապարհի մասին է»,- գրում է ադրբեջանական լրատւամիջոցներից մէկը եւ նշում, որ եթէ խօսքն աւտոմոբիլային հաղորդակցութեան մասին է, ապա այն ենթադրում է նախագիծ, որի իրականացման համար ՀՀ-ից աւելի երկար ժամանակ է պահանջւելու:

Ադրբեջանական կողմը նկատում է, որ Փաշինեանը փորձում է Հիւսիս-Հարաւ նախագիծը կապել տարածաշրջանում կոմունիկացիաների բացման հարցի հետ, մինչդեռ, ըստ ադրբեջանական վերլուծաբանների, իրանական կողմը հասկացրել է ՀՀ-ին՝ «Հիւսիս-Հարաւ»-ը ոչ մի առնչութիւն չունի «Զանգեզուրի միջանցք»-ի հետ:

«Փաշինեանը չպէտք է ոչ մի բան հնարի, ամէն ինչ արդէն իր փոխարէն մտածած է: Եթէ նա իրապէս ուզում է Հայաստանի տնտեսութիւնը բարձրացնել, պէտք է լսի Բաքւի խորհուրդներին: Իհարկէ, ադրբեջանական կողմն առաջին հերթին՝ իր սեփական շահերով է առաջնորդւելու, բայց կանի նաեւ այնպէս, որ գործընկերները նախագծերից յետ չմնան: Ինչ-որ բան յուշում է, որ Փաշինեանն այս ամէնը հասկանում է, եւ հնարաւոր է՝ նրա «հայկական խաչմերուկը» փորձ է համոզել հայերին, որ նրանց «Զանգեզուրի միջանցք»-ը պէտք է»,- գրել էր «Day.az»-ի յօդւածագիրը:

«Հիւսիս-Հարաւը եւ Արեւելք-Արեւմուտքը որոշւում է աշխարհագրութեամբ, ոչ թէ փաշինեանական ցանկութիւններով: Փաշինեանն իշխանութեան եկել է մեդիայից: Նա սովոր է մանիպուլիացիայի, եւ յաճախ կորցնում է իրականութեան եւ քարոզչութեան միջեւ ընկած սահմանը»,- «Day.az»-ի հետ զրոյցում ասել էր քաղաքագէտ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամաւոր Ռասիմ Մուսաբեկովը:

Հիմա Նիկոլ Փաշինեանը «Հայկական խաչմերուկը» վերաձեւակերպել է «Խաղաղութեան խաչմերուկ», բայց չի մանրամասնում՝ այդ ինչ ենթակառուցւածքներ, խողովակաշարեր, մալուխներ, էլեկտրահաղորդման գծեր են Ադրբեջանի պահանջներին համահունչ իր խաղաղութեան օրակարգից, զօրքերի յետքաշման առաջարկից, իր առաջարկած քարտէզով դելիմիտացիայից եւ դեմարկացիայից յետոյ անխափան եւ անվտանգ մնալու ՀՀ տարածքում կամ անցնելու:

Ինչպէս վերեւում նշեցինք, այս մասին դեռ առանձին եւ մանրամասն խօսելու ենք:

Ի դէպ, ադրբեջանական լրատւամիջոցներից մէկը Փաշինեանի՝ «Խաղաղութեան խաչմերուկի» քարտէզային տեսլականը դիտարկել է որպէս համաձայնութիւն «Զանգեզուրի միջանցք»-ին, որքան էլ, որ Փաշինեանը պնդի, թէ չեն գործում միջանցքային տրամաբանութեան մէջ:

Աւելին, Թուրքիայի պետական

**(Շար. 6-րդ էջում)**

Վահագն Մելիքեան.

## «Նախկինում Արցախի ինքնորոշման համար պայքարած մեր դիւանագէտներն այսօր ինչպէ՞ս են քնում, հա՞շտ են իրենց խղճի հետ»



Ադրբեջանից զազ գնելու մտադրութեան մասին յայտարարութիւնն Օվերտոնի հերթական պատուհանն է բացում, մատուցւում է մի նոր, լրիւ անսպասելի խօսոյթ, որը պէտք է հերթական անգամ փորձարկի լայն հասարակական շերտերի դիմադրողականութիւնը: Այս, ինչպէս եւ շատ այլ պարագաներում, ներմուծւել են նմանատիպ՝ համարժէք մտածելակերպից դուրս, մեր ինքնութեան հետ կապւած առանցքային մօտեցումների հետ որեւէ աղերս չունեցող խօսոյթներ, ասոյթներ, նախադասութիւններ, տեսակէտներ, դիրքորոշումներ: Որոշակի ժամանակ է վերցւում՝ հասկանալու, թէ ինչպիսի արձագանգ կը լինի, երբ տարիներ, ամիսներ կամ նոյնիսկ օրեր առաջ նման առաջարկներն անսպասելի կը լինէին, վատ երազ կը թւային: «168TV»-ի «#ՕրաԽնդիր» հաղորդման ժամանակ նման կարծիք յայտնեց արտակարգ եւ լիազօր դեսպան, ՀՀ ԱԳՆ նախկին գրլխաւոր քարտուղար Վահագն Մելիքեանը:

«Արտաբերած խօսքի, դիրքորոշումների առումով կարծես թէ որոշակի դերաբաշխում գոյութիւն ունի: Կան հարցեր, որոնք չպէտք է բարձրաձայնւեն ամենաբարձր մակարդակով, բայց հասարակութեան լայն շերտերին պէտք է լսելի դառնան տարբեր նմանատիպ ներկայացուցիչների, այս դէպքում՝ տարածքային կառավարման փոխնախարարի շուրթերով, որից յետոյ պէտք է հետեւողականօրէն դիտարկել, թէ ինչպիսի արձագանգ կը ստանայ նմանատիպ մօտեցումը: Կան ինստիտուցիոնալ, կազմակերպւած, փաթեթաւորւած եւ «հիմնաւորւած» տեսակէտներ եւ դիրքորոշումներ, միւս կողմից՝ կան որոշակի տաբուներ, որոնք չպէտք է բարձրաձայնւեն: Երեւի թէ նախկինում ձեռք բերւած կուլիսային պայմանաւորւածութիւններ կան, որոնք չեն բարձրաձայնում եւ մանրամասնում, որ հասարակութիւնը չհասկանայ՝ ինչի հետ գործ ունի, վաղն ինչ մարտահրաւէրների առջեւ է կանգնելու»,- ասաց նախկին դիւանագէտը:

«Մեր ԱԳՆ-ն չի արձագանգում, այսպէս կոչւած, «Արեւմտեան Ադրբեջանի» խօսոյթին: Ուրեմն հրահանգ է տրւած, որ որեւէ արձագանգ չլինի: Մենք նմանատիպ շատ դէպքեր ենք ունեցել, որ պիտի լինէր շատ արագ, կտրուկ եւ կոշտ արձագանգ, բայց ցաւալիօրէն չենք տեսել այդ արձագանգը: Սա այդ դէպքերից մէկն է, ապագայում եւս ականատես կը լինենք նմանատիպ մօտեցումների: Ծանր է տեսնել, հետեւել մեր դիւանագէտների արտաբերած նախադասութիւններին: Նրանց մէջ կան մարդիկ, որոնք զարմանք ու շոկ են առաջացնում, երբ գիտես նրանց դիրքորոշումը, մազաչափ չես կասկածում նրանց հայրենասիրութեանը, նաեւ պրոֆեսիոնալ ունակութիւններին: Կայ պաշտօնական եւ անձնական, քաղաքացիական դիրքորոշում: Ի վերջոյ, այդ մարդիկ ժամը 18-ից յետոյ ոչ թէ դիւանագէտներ են, այլ քաղաքացիներ, հայեր, ովքեր տարիներ շարունակ Արցախի անկախութեան հարցն են բարձրացրել»,- նշեց Մելիքեանը:

Հասարակական գործչի կարծիքով՝ մեր դիւանագէտներն Արցախի մասին տասնամեակներով խօսել են ոչ միայն լսելի լինելու համար, այլեւ պարզապէս արտայայտել են իրենց սկզբունքային դիրքորոշումը. «Դիւանագէտների շարքերում շատ էին նրանք, ովքեր ոչ միայն պաշտօնական դիրքորոշման հետեւորդներ էին, այլեւ դա իրենց անձնական սկզբունքային տեսակէտն էր: Սա է, որ շոկ է առաջացնում, ինչպէ՞ս կարող են նրանք իրենց այսպէս պահել: Շատերն ասում են, որ դիւանագէտը քաղաքականութեանը չի խառնւում, նա օրւայ արտաքին քաղաքականութիւնն իրագործողն է: Բայց այդ ամէնն ընկալելի կը լինէր, եթէ մենք չունենայինք այն աղէտալի վիճակը, որն այսօր ունենք: Այդ նոյն դիւանագէտներն ամենավատ երազում անգամ չէին կարող պատկերացնել, թէ ուր ենք հասնելու այսօր: Այս իրավիճակում նրանք ինչպէ՞ս են քնում եւ արթնանում, հա՞շտ են իրենց խղճի հետ: Տարիներ շարունակ նրանք դիւանագիտական պայքարի առաջնագծում են եղել՝ պաշտպանելով Արցախի անկախութիւնը, մեր հայրենակիցների ինքնորոշման իրաւունքը»:

«Նախկինում մենք շատ յաջողութիւնների էինք հասել: Միգուցէ որոշ դէպքերում խնդիրներ ենք ունեցել, բայց նմանատիպ իրավիճակը, երբ սկուտեղի վրայ օրնիբուն թշնամուն ենք մատուցում այն, ինչն անգամ ինքը իր վարդագոյն երազներում չէր կարող տեսնել, խնդրայարոյց է: Այս իրավիճակում որեւէ արդարացում ընկալելի չէ: Դժբախտաբար, յայտնւել ենք մի վիճակում, երբ փրկութեան կամ դրականի փրնտրրտուքի ճանապարհին բազմաթիւ արգելքներ կան»,- ամփոփեց Վահագն Մելիքեանը:

**«168.am»**

# Գնահատանքի երեկոյ՝ Ս. Թադէի ուխտագնացութեան նպաստած բոլոր անհատներին եւ կառոյցներին













***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-*** *Հոկտեմբերի 28-ի երեկոյեան ժամը 20:00-ին, ազգային առաջնորդարանի «Համազասպ Ոսկանեան» սրահում, նախագահութեամբ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի, նախաձեռնութեամբ՝ Թեմական խորհրդի եւ կազմակերպութեամբ Վանքերի ուխտագնացութեան Գործադիր յանձնախմբի, տեղի ունեցաւ գնահատման թէյասեղան ի պատիւ Ս. Թադէի վանքի տարեկան եռօրեայ ուխտագնացութեան իրենց նպաստը բերած անհատների եւ կառոյցների:*

*Մտերմիկ հաւաքին ներկայ էին բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները, գլխաւորութեամբ Վանքերի ուխտագնացութեան Գործադիր յանձնախմբի, ինչպէս նաեւ այն անհատներ, ովքեր միշտ նեցուկ են կանգնել տարեկան ուխտագնացութեան կատարեալ անցկացմանը: Սրբազան Հօր կողքին ներկայ էին՝ Թաւրիզի հոգեւոր հովիւ Տ. Մարտիրոս քհնյ. Ղուկասեանը, Թեմական խորհրդի անդամները, Իրանի եկեղեցիների պահպանման կենտրոնի տնօրէն դոկտ. Շերլի Աւետեանը, «Կոմիտաս» երգչախմբի խմբավար՝ երաժիշտ Վարդան Վահրամեանը, եւ մի շարք անհատներ:*

*Բացման եւ բարի գալստեան խօսքը Թեմական խորհրդի անունից փոխանցեց ատենապետ Գագիկ Զորջեանը, յիշելով բոլոր այն կառոյցներին ու անհատներին, որոնք նպաստել էին ուխտագնացութեան յաջող կայացմանը: Կազմակերպական ընթացքից մանրամասն բացատրութիւններ տուեց Գագիկ Զորջեանը, ով նախապատրաստական աշխատանքներին ներկայ էր եղել Վանքում, մօտեկից հետեւելով Վանքերի յանձնախմբի նուիրեալ երիտասարդների գործունէութեանը: Նա շեշտեց այն հաւաքական ջանքը, որը գործադրուել*

**(Շար. 6-րդ էջում)**













# Արշիլ Գորկու գլուխգործոցներից մէկը կը յայտնուի Նիւ Եօրքի «Christie's» աճուրդում



*Նոյեմբերի 9-ին «Christie's»-ը Նիւ Եօրքում կանցկացնի աճուրդ: Ընտրեալներից է ամերիկահայ հանրայայտ նկարիչ Արշիլ Գորկու «Անխացած սիրահարները I» (1946 թ.) կտաւը ճանաչուած կոլեկցիոներ Դէյւիդ Գեֆֆէնի հաւաքածոյից:*

*Կտաւն առաջին անգամ ցուցադրուել է 1953 թուականին Նիւ Եօրքի Սիդնի Ջանիս պատկերասրահում, այնուհետեւ յայտնուել է Ժամանակակից արուեստի եւ Գուգենհայմի թանգարաններում:*

*1946 թուականի յունուարին Գորկու արուեստանոցում բռնկւում է հրդեհ, այրւում են նկարչի 20 կտաւները, գրքերը: Ժամանակ չկորցնելով՝ նա նոր ստուդիա է վարձակալում եւ սկսում աշխատել: Իսկ նոր ստեղծած աշխատանքներն էլ խորհրդանշում էին վերածնունդ, որոնցով էլ նկարիչն իր ուրոյն տեղը հաստատեց 20-րդ դարի արուեստում: Ստեղծած նկարների թւում էին երեք կտաւներ՝ «Անխացած սիրահարները» վերնագրով:*

*«Christie's»-ի կայքում Արշիլ Գորկու «Անխացած սիրահարները I» աշխատանքն աճուրդում ներկայացնելու մասին նիւթը վերնագրուած է՝ «Ամենահիասքանչ փիւնիկ». ինչպէս Արշիլ Գորկին վեր յառնեց մոխիրներից՝ գլուխգործոց ստեղծելու համար»:*

*Արշիլ Գորկին ծնուել է 1902 թ. (ըստ քրոջ՝ Վարդուշի՝ 1904 թ. ապրիլի 22) Վանայ լճի ափին գտնուող Խորգոմ գիւղում: Մկրտութեան անունը Մանուկ Ոստանիկ Ադոյեան է: Մանուկը պապիկի անունն է, իսկ Ոստանիկը՝ մօր՝ Շուշանի գիւղի: Նախնական կրթութիւն ստացել է Խորգոմի եւ Վանի հայկական դպրոցներում: 1915 թ.-ի գաղթի ժամանակ մօր եւ քոյրերի հետ եկել է Երեւան, որտեղ զբաղուել է ատաղձագործութեամբ եւ տպագրական գործով: 1919 թ.-ին տեղափոխուել է Թիֆլիս, ապա՝ ԱՄՆ: Գորկին սովորել է Փրովիդենսի եւ Բոստոնի դիզայնի դպրոցներում, 1926 թուականին աւարտել է Նիւ Եօրքի արուեստի կենտրոնական դպրոցը (որտեղ դասաւանդել է 5 տարի):*

*1921 թ., երբ ընդունւում է Բոստոնի Գեղարուեստի եւ դիզայնի դպրոց, 19 տարեկան հասակում փոխում է Մանուկ Ոստանիկ Ադոյեան անունը՝ դառնալով Արշիլ Գորկի: Մանուկը Գորկի ազգանունը վերցնում է ռուս գրող Մաքսիմ Գորկու ազգանունից, ում պաշտում էր, իսկ Արշիլ անունը ուղերձ էր իր հայկական ծագմանը, որը ստիպուած էր թաքցնել. Արշիլ անունը Արշակ, Արծրուն, արծիւ անունների պէս սկսում էր «ար» տառերով:*

*1933 թուականին միանում է նկարիչների օգնութեան կառավարական ծրագրին (PWAP) եւ պատուէրով ստեղծում Նիւ Եօրքի օդանաւակայանի որմնանկարը: 1938 թուականին Գորկին Հայաստան է ուղարկում չորս պատկեր: 1939 թուականին մասնակցում է Նիւ Եօրքի համաշխարհային ցուցահանդէսի դեկորատիւ աշխատանքներին:*

*1945 թուականին տեղափոխւում է Ռոքբուրի Կոնեկտիկուտ: Պատրաստւում է Ջուլիան Լեւի պատկերասրահում բացելիք ցուցահանդէսին, սակայն 1946 թուականին այրւում է արուեստանոցը, նկարներն ու գրադարանը: Նոյն թուականին տանում է քաղցկեղի վիրահատութիւն: 1948 թուականին աւտովթարից վնասւում է ողնաշարը, որի պատճառով աջ ձեռքը դառնում է անաշխատունակ: Չդիմանալով վերջի տարիների դժարութիւններին՝ 1948 թուականին Գորկին ինքնասպան է լինում:*

*Վիլիամ Ֆէյւերը 2010 թ. փետրուար ամսւայ «The Guardian»-ի համարում գրում է՝ «Մանուկ Ոստանիկ Ադոյեանը կամ էլ Արշիլ Գորկին «Ամերիկայի ամենամեծ նկարիչներից մէկն է»»:*

**«Panorama.am»**



## Աբրահամ Գասպարեան. «Ատոմակայանը փակելու է՝ Ադրբեջանից գազ ստանալու դէպքում»

*1997 թւականի հոկտեմբերի 27-ի իրագործման նպատակը մեր այսօրւայ ներկան էր: Հոկտեմբերի 27-ի շարունակութիւնն Արցախեան 44-օրեայ պատերազմն էր, ապա՝ Արցախի ամբողջական յանձնումն Ադրբեջանին, ինչն ամբողջութեամբ տեղաւորւում է թուրք-ադրբեջանական տանդեմի գլխաւոր նպատակի՝ մեր տարածաշրջանում նոր քարտէզագրման համատեքստում:*

*«168 TV»-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում, խօսելով 1999 թւականի հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան եւ Փաշինեանի հռչակած «Խաղաղութեան խաչմերուկ»-ի նպատակների համադրման մասին, նման տեսակէտ յայտնեց «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոնի եւ «ABC media»-ի ղեկավար Աբրահամ Գասպարեանը:*

*««Խաղաղութեան խաչմերուկ» ասւածն ընդամէնը փաթեթաւորում է: Գետնի վրայ, եթէ կայ մի քարտէզ, որտեղ չկայ Արցախ, ապա դա կեղծ քարտէզ է եւ կապ չունի հայկական իրականութեան հետ: «Խաղաղութեան խաչմերուկ» ասւածի մասին պատմող թուղթն անհրատեսական թուղթ է, որտեղ իշխող ուժի գլխաւոր ներկայացուցիչը փորձում է համոզել, թէ 12 կէտով դռներ բացելով Հայաստանի հարեւան եւ թշնամի պետութիւնների հետ, Հայաստանը զարգանալու է: Իրականում, սակայն, հարց է, թէ նման ենթակառուցւածքներ ստեղծելու համար ո՞վ է փող տալու Հայաստանին, բացի այդ, չկայ որեւէ տնտեսական հաշւարկ, ըստ որի՝ այդ խաչմերուկը բխում է Հայաստանի տնտեսական շահերից: Այդ խաչմերուկ ասւածն իրական քաղաքականութեան հետ որեւէ աղերս չունի»,- ասաց Գասպարեանը:*

*Նրա խօսքով՝ երբ Հայաստանը կորցրել է ինքնիշխանութիւնը, իսկ դա ապացուցող փաստըն ադրբեջանական զօրքն է Հայաստանում, ինքնիշխանութեան մասին կոկորդ պատռողները չեն էլ համարձակւում թշնամուն դուրս վռնդել մեր երկրից, խաղաղութեան խաչմերուկի մասին անիմաստ է խօսել, որը մեր տարածաշրջանի իրական քաղաքական գործընթացների հետ կապ չունի:*

*«Խաղաղութեան աղաւնի՞ է ուզում դառնալ, քաւ լիցի, կարող է այդպիսին դառնալ, բայց ամէն ինչ յանձնելով»,- ասաց Գասպարեանը՝ ընդգծելով՝ առաջնայինը Հայաստանի պետականութիւնը պահպանելն ու Արցախի հարցը չփակելն է, ինչը, սակայն, չի անում օրւայ իշխանութիւնը, որն իրեն դրել է Ռեմբոյի տեղ եւ փորձում է գնալ աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխութեան՝ չգիտակցելով դրա ծանր հետեւանքները Հայաստանի համար:*

*«Նա (Փաշինեանը.- Ա.Ս.) Ռեմբոյի տեղ է դրել իրեն իր զոմբիլենդի մօտ, բայց ոչ Պուտինի, ոչ Բայդէնի, ոչ Միշէլի կամ Իրանի հոգեւոր առաջնորդի մօտ Ռեմբօ խաղալ չի կարող: Թող գնայ գլուխը պատին տայ, եթէ իմ երկրի հաշւին պէտք է Ռեմբօ խաղայ»,- ասաց Գասպարեանը:*

*Ինչ վերաբերում է «Խաղաղութեան խաչմերուկ»-ի իրագործման մասին յայտարարութիւններին զուգահեռ ՔՊ-ականների պատրաստակամութեանը՝ Ադրբեջանից գազ գնելու վերաբերեալ, Աբրահամ Գասպարեանը շեշտեց.*

*«Եթէ Ադրբեջանից գազ ստացաք, 5 տարի յետոյ ատոմակայանը փակւելու է, եւ Հայաստանը կախւածութեան մէջ է լինելու Թուրքիայից»:*



## Տնտեսագէտ. «Սահմանները բացելուց յետոյ Թուրքիայի տնտեսութիւնը պարզապէս «կուլ կը տայ» ՀՀ տնտեսութիւնը»

*Հոկտեմբերի 27-ին ԱԺ նախագահ Ալէն Սիմոնեանը լրագրողներին վստահեցնում էր, որ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ յարաբերութիւնները հաստատելուց ու ճանապարհները բացելուց յետոյ Հայաստանը տընտեսական եռապատիկ աւելի մեծ աճ է ունենալու:*

*«Հայաստանը չի կարող իրեն դուրս դնել տարածաշրջանի տնտեսական, առեւտրային յարաբերութիւններից, եւ մենք պէտք է ամէն ինչ անենք, որպէսզի մեր ճանապարհները բոլոր՝ Ադրբեջանի, Թուրքիայի հետ բացւեն: Ես ձեզ խոստանում եմ՝ այդ պարագայում Հայաստանի տնտեսութիւնը, եթէ հիմա 12-14 տոկոս ենք ունենում, ապա այդ ժամանակ կրկնապատիկ, եռապատիկ աճ է ունենալու, եւ դա մեր համաքաղաքացիները տեսնելու են: Էլ չեմ ասում, որ վերջապէս խաղաղութիւն ենք ունենալու, ունենալու ենք խաղաղ երկիր»,- յայտարարել էր Սիմոնեանը:*

*Իսկ աւելի վաղ ՀՀ ՏԿԵ փոխնախարար Յակոբ Վարդանեանը յոյս էր յայտնել, որ ՀՀ եւ Ադրբեջանի միջեւ քաղաքական տարաձայնութիւնները կը հարթւեն, ու Հայաստանը հնարաւորութիւն կը ստանայ գազ ներմուծելու Ադրբեջանից:*

*Յիշեցնենք, որ օրերս Ազգային ժողովում հարցուպատասխանի ժամանակ Փաշինեանը նոր տերմին մտցրեց շրջանառութեան մէջ՝ Խաղաղութեան խաչմերուկ անւամբ: Աւելի ուշ տարածւեց նաեւ համանուն նախագիծը:*

*«168.am»-ի հարցին, թէ որքանո՞վ է իրատեսական Ալէն Սիմոնեանի յայտարարութիւնը՝ թշնամական երկրների հետ սահմանները բացելու պարագայում ՀՀ տնտեսութեան զարգացման մասին պնդումը, տնտեսագէտ Հրանտ Միքայէլեանը կարճ պատասխան տւեց՝ Սիմոնեանի յայտարարութիւնը բացարձակ սուտ է, իսկ Թուրքիայի հետ տնտեսական յարաբերութիւնների մասին մտածելը՝ սխալ:*

*Ըստ Միքայէլեանի՝ նախկինում բազմիցս յայտարարւել է, որ Թուրքիայի հետ յարաբերութիւններով ՀՀ-ում որեւէ առաջընթաց չի գրանցւելու: Առաւելագոյն առաջխաղացումը, ըստ մասնագիտական գնահատումների, կարող է կազմել ընդամէնը 1 տոկոս: Այս դէպքում էլ, տնտեսագէտի խօսքով, հաշւի է առնւել միայն առանձին գործօնների ազդեցութիւնը:*

*Բացի այդ, նրա գնահատմամբ, Թուրքիայի հետ յարաբերութիւններում տնտեսական օգուտները գրանցել չենք կարող, եթէ չգիտենք այդ յարաբերութիւնների հաստատման պայմանների մասին: Իսկ ներկայ իրողութիւնները, ըստ Հրանտ Միքայէլեանի՝ տանում են նրան, որ Հայաստանն առաջիկայում կարող է դառնալ պարզապէս Թուրքիայի «կլիենտ» պետութիւն:*

*Տնտեսագէտը նաեւ վստահեցրեց, որ հարեւան երկրի արտադրողները մեծաքանակ են եւ հայ-թուրքական սահմանները բացելու պարագայում իրենց արտադրութիւնը Հայաստանի միջոցով մեծացնելու խնդիր չունեն:*

*«Եթէ վերցնենք Հայաստանի արդիւնաբերական արտադրանքների շուկան, ու պայմանական՝ տարեկան 10 մլրդ. դոլար, որի 5 տոկոսն արդէն իսկ առաջանում է թուրքական ապրանքների միջոցով, իսկ մնացած 95 տոկոսը՝ այլ երկրների, տեսականօրէն, Թուրքիան կարող է եւս մի 5-10 տոկոս գրաւել հայկական շուկայում՝ այդ շուկայից դուրս մղելով ուրիշ արտադրողների: Այս պարագայում, ըստ երեւոյթին, կը թիրախաւորուեն հէնց տարածաշրջանային երկրները՝ Վրաստանը, Իրանն ու Ռուսաստանը»,- ասաց տնտեսագէտը:*

*Նա նաեւ արձանագրեց, որ ի տարբերութիւն Հայաստանի՝ Թուրքիան Հայաստանում ունի վաճառքի ցանցեր: Բացի այդ, կան նաեւ մանր առեւտրականներ, որոնք իրենց ապրանքը նոյնպէս ՀՀ են ներմուծում թուրքական շուկայից: Սահմանների բացւելու դէպքում Թուրքիան փորձելու է ոչ թէ տնտեսական գործունէութեան ընդլայնում իրականացնել Հայաստանում, այլ աւելի մեծ ուժով իրականացնել լաբբինգի ու յատուկ ծառայութիւնների աշխատանքները:*

*Ի տարբերութիւն Թուրքիայի, Հայաստանը, ըստ մասնագէտի, Թուրքիայում իր արտադրութիւնը մասշտաբացնելու խնդիր ունի: Սակայն անգամ այդ հնարաւորութիւնն ունենալու պարագայում չի կարող 20 կամ 50 տոկոսով աւելացնել իր արտադրութեան ծաւալները:*

*Միւս կողմից՝ տնտեսագէտը համոզմունք յայտնեց, որ Հայաստանում չկայ արտադրութեան մի որեւէ տեսակ, որը Թուրքիայում առկայ չէ ու կարող է հետաքրքրել այդ երկրին:*

*«Կարող են ինչ-որ առանձին ապրանքներ լինել… ինչպէս, օրինակ՝ անցեալ տարի ոսկի արտահանւեց, դրանից առաջ՝ հոսանք… բայց դա հաստւածական գործակցութիւն էր: Իրականում՝ Հայաստանը Թուրքիային առաջարկ չունի ու չի էլ կարող ունենալ»,- ասաց տնտեսագէտը:*

*Նրա խօսքով՝ տեսականօրէն որոշակի ապրանքներ կարող են Հայաստանից արտահանւել Արեւելեան Թուրքիայի որոշ շրջաններ, սակայն՝ խիստ սահմանափակ ծաւալներով:*

*Միւս կողմից, օրինակ՝ հագուստի արտադրութեան ոլորտում՝ ե՛ւ հայ արտադրողները, ե՛ւ թուրքերը գտնւում են մրցակցային հարթակում:*

*Սա, ըստ Հրանտ Միքայէլեանի, նշանակում է, որ երբ հայ արտադրողները, Թուրքիայում չունենալով որեւէ ներկայացւածութիւն, փորձեն որեւէ քայլ իրականացնել՝ թուրքական կողմը կարող է պարզապէս կուլ տալ հայկական շուկան՝ ամբողջութեամբ ողողելով այն իր արտադրութեամբ:*

*«Այսինքն, հայ արտադրողների արտադրութիւնն այս պարագայում ոչ թէ աճելու է, այլ նոյնիսկ նւազելու է: Այս պարագայում, ստացւում է, որ հայկական տնտեսութիւն ո՛չ միայն չի զարգանայ, այլեւ ընդհակառակը, կտրուկ կարող է նւազել»,- ասաց Հրանտ Միքայէլեանը՝ պնդելով, որ Թուրքիան այս իրավիճակն անգամ կը ծառայեցնի իր շահերին՝ քաղաքական շանտաժների տեսքով ու սահմանը կրկին փակելու սպառնալիքներով:*

*Անդրադառնալով Ադրբեջանից առաջիկայում գազ ներմուծելու Հայաստանի իշխանութիւնների ցանկութեանը՝ մասնագէտը յայտարարեց, որ դիւերսիֆիկացիան որքան էլ օգտակար գաղափար է՝ չպէտք է մոռանալ Ադրբեջանի կողմից տարւող քաղաքական մօտեցումներն ու դրանց հնարաւոր հետեւանքները Հայաստանի վրայ: Այս համատեքստում, Միքայէլեանը նաեւ համոզմունք յայտնեց, որ ՀՀ իշխանութիւնները գնում են ադրբեջանական գազը ներմուծելու ճանապարհով՝ ռուսական կողմի հետ գործակցութիւնը թուրք-ադրբեջանականով փոխարինելու համար:*

*«Դիւերսիֆիկացիան ենթադրում է ո՛չ միայն տնտեսական սեգմենտ, այլեւ քաղաքական, որպէսզի մենք կախւածութեան մէջ չլինենք Ռուսաստանից, այլ կախւածութեան մէջ ընկնենք ումի՞ց՝ Ադրբեջանի՞ց… Այս քաղաքականութիւնը որեւէ լաւ արդիւնք չի կարող տալ»,- շեշտեց տնտեսագէտ Հրանտ Միքայէլեանը:*

# Արցախահայերը դարձել են օրւայ իշխանութիւնների անտարբերութեան պատանդը….





*Ադրբեջանի ցեղասպան եւ ՀՀ-ի գործող իշխանութիւնների անհեռանկար քաղաքականութեան արդիւնքում Արցախի Հանրապետութեան աւելի քան հարիւր հազար մեր հայրենակիցներ յանկարծ յայտնւեցին բառիս բուն իմաստով փողոցում: Արցախահայերն ստիպւած են եղել հապշտապ լքել իրենց տները՝ թողնելով ամէն ինչ: Ընդ որում, Հայաստանի իշխանութիւնները հերթական անգամ բոլորիս հաւաստիացնում էին, թէ արցախահայերին չեն թողնի բախտի քմահաճոյքին եւ կանեն ամէն ինչ, որպէսզի ապահովեն նրանց բնականոն կեանքը:*

*Իսկ իրականութիւնն լրիւ այլ է...*

*Արցախից բռնի տեղահանւած մեր հայրենակիցների վիճակը շարունակում է մնալ ծանր: Նրանք պաշտպանւած չեն օրէնքով եւ չունեն պաշտօնական կարգավիճակ: Շատերը չգիտեն, թէ ինչպէս դիմանալ մօտեցող ձմռանը, յաղթահարել բազմաթիւ սոցիալական, առողջապահական, տնտեսական խնդիրները, իսկ գործող կառավարութիւնը ի լուր աշխարհի շտապում է զեկուցել, թէ ինչպիսի ջանասիրութեամբ են լուծում բռնի տեղահանւած արցախահայերի խնդիրները:*

*Մեր հայրենակիցներից շատերն այլեւս ՀՀ-ի գործող կառավարութեան օգնութեան յոյս չունեն՝ ոչ աշխատանքի տեղաւորման, ոչ աշխատավարձերի ու թոշակների վճարման, ոչ գործազրկութեան նպաստի, ոչ բնակարանային...*

*Միայն դատարկ յայտարարութիւններ ու աննշան խոստումներ. այսպէս կարելի է համառօտ բնութագրել «յեղափոխական» պաշտօնեաների գործունէութիւնը: Նրանք հոգում են բռնի տեղահանւած մեր հայրենակիցների մասին ոչ թէ իրականում, այլ թղթի վրայ:*

*Արցախահայերը դարձել են օրւայ իշխանութիւնների անտարբերութեան պատանդը...*

**ՄՀԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ**
**ՀՅԴ Շիրակի մարզային կոմիտէութեան ներկայացուցիչ,**
**ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր**
**«Yerkir.am»**




## Էդիկ Մինասեան.

# «Պէտք է ամէն կերպ չէզոքացնել «Զանգեզուրի միջանցք» կոչւած ծրագիրը»

Երեւանի Պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետի դեկան, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասեանի կարծիքով՝ հայերի առջեւ այսօր ծառացել են նոյն մարտահրաւէրները, որոնք կային 1918 թւականին ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլեւ Ադրբեջանի տարբեր հատւածներում, այդ թւում՝ Բաքւում. այդ առումով պատմութիւնն իսկապէս հարիւր տարի անց էլ կրկնւում է։

«Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ ԵՊՀ պատմութեան ֆակուլտետում տեղի ունեցած Բաքւի կոմունայի եւ հայերի կողմից Բաքւի պաշտպանութեան 105-ամեակին նւիրւած գիտաժողովում Մինասեանը հանգամանօրէն անդրադարձաւ հայերի մասնակցութեանը 1918 թւականի Բաքւի պաշտպանական մարտերին՝ ընդդէմ մուսաւաթական ուժերի։

«Ուղիղ 105 տարի առաջ տեղի ունեցած իրադարձութիւնները բնորոշւում են պատմական առանձնայատկութեամբ. դրանք 44-օրեայ պատերազմից առաջ եւ յետոյ կրկնւեցին։ Թուրքիան եւ Ադրբեջանը համատեղ ուժերով Լեռնային Ղարաբաղի դէմ սանձազերծեցին մեծածաւալ ագրեսիա, ինչի հետեւանքով այն երեք տարի անց ամբողջութեամբ հայաթափւեց։ Թուրք-ադրբեջանական տանդեմը հերթական անգամ իրականացրեց հայկական էթնոսի բնաջնջմանն ուղղւած ցեղասպան ծրագիր, որը մշակել էին դեռ 1918 թւականին մեծ Թուրան ստեղծելու նպատակադրութեամբ։ Այդ քաղաքականութիւնը շարունակւում է նաեւ այսօր, ուստի հայկական ինքնապաշտպանական ուժերի եւ մասնաւորապէս Բաքւի պաշտպանական մարտերի թեման դարձել է առաւել արդիական, քանի որ պատմութիւնից դասեր քաղելու եւ ճիշտ որոշումներ ու քայլեր կատարելու խնդիր ունենք»,- ասաց Մինասեանը։

Նրա դիտարկմամբ՝ շատ կարեւոր նշանակութիւն ունի հայութեան անմիջական մասնակցութիւնը Բաքւի ինքնապաշտպանութեանը, քանի որ այդ ժամանակ Ադրբեջանի մայրաքաղաքն, ըստ էութեան, հայկական էր, որտեղ ապրում էին մօտ 150 հազար հայեր։ Ինքնապաշտպանական մարտերը կարեւոր էին ընդհանուր առմամբ ողջ արեւելահայութեան համար։ Պատմաբանը վկայակոչեց գեներալ Յակոբ Բագրատունու խօսքերը, ով ժամանակին անդրադառնալով թուրք-ադրբեջանական ծրագրին՝ նշել է, որ Բաքւի գրաւմանը պէտք է յաջորդէր Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի օկուպացիան։ Բագրատունին շեշտում էր, որ սեղանին դրւած էր ոչ միայն հայութեան փրկութեան, այլեւ Հիւսիսային Կովկասի անվտանգութեան հարցը։ ՀՅԴ քաղաքական անւանի գործիչ Սերգէյ Մելիք-Եօլչեանն իր հերթին ընդգծել է, որ Բաքւի ինքնապաշտպանական մարտերով յաջողւել է շեղել թշնամու ուշադրութիւնը՝ ապահովելով Սարդարապատի, Բաշ-Ապարանի հերոսամարտերում հայկական զօրքերի յաղթանակը։

«Բաքւի կոմունան Ստեփան Շահումեանի գլխաւորութեամբ նպատակ ունէր ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ ամբողջ Ադրբեջանում հաստատել խորհրդային կարգեր։ Այդ ժամանակ բաւականին հետաքրքիր համագործակցութիւն կար բոլշեւիկների ու դաշնակցականների միջեւ, ինչը բացառիկ երեւոյթ էր, եւ որը պայմանաւորւած էր հայկական շահերի պաշտպանութեամբ։ Ազգային խորհուրդը Ռոստոմի գլխաւորութեամբ գնաց զիջումների՝ ընդունելով Շահումեանի առաջարկները, քանզի սեղանին դրւած էր հայութեան փրկութեան հարցը։ Բաքւի բոլշեւիկեան իշխանութիւնն այդ օրերին իր տրամադրութեան տակ ունէր մօտ 20000 զինւոր, որոնց 70 տոկոսը հայեր էին։ Չորս մարտական բրիգադների հրամանատարները նոյնպէս մեր հայրենակիցներն էին։ Բոլորն էլ մարտնչում էին Կարմիր բանակի դրօշի ներքոյ»,- նշեց Մինասեանը։

Նա յիշեցրեց, որ թէեւ 1918 թւականին արդէն կնքւել էր Բաթումիի պայմանագիրը, սակայն թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան չէր թաքցնում, որ իրենց նպատակը Բաքւի նաւթային պաշարներին տիրանալն էր, ու քանի որ Առաջին Աշխարհամարտը դեռ շարունակւում էր, ուստի պատեհ առիթ էր ստեղծւել պանթուրքիստական ծրագիրն ամբողջութեամբ կեանքի կոչելու, այդ թւում՝ Արեւելեան Հայաստանը նւաճելու համար։

«Այդուհանդերձ ուժերն անհաւասար էին, ինքնապաշտպանութեան մարտիկների առջեւ կանգնած էր մեծաքանակ թուրքական բանակը, իսկ Գանձակում արդէն ձեւաւորւել էր մուսաւաթական կառավարութիւնը։ Թուրք-ադրբեջանական զօրախմբերը նախ գրաւեցին Շամախին, այնուհետեւ Բաքուն՝ չնայած յամառ ինքնապաշտպանութեանը։ Ցաւալի է արձանագրել, որ ռուսական կենտրոնական իշխանութիւնը, չնայած խոստումներին, այդուհանդերձ չօգնեց Բաքւի կոմունային։ Չէ՞ որ կան Շահումեանի նամակները՝ ուղղւած Լենինին, Ստալինին ու Տրոցկուն։ Հետագայ երկու տարիներին, երբ Ադրբեջանում հաստատւեց մուսաւաթական իշխանութիւնը, տարբեր հայաշատ վայրերում տեղի ունեցան ջարդեր եւ ցեղասպանական գործողութիւններ։ Բաքւի կոմունայի 26 անդամները, որոնցից ութը հայեր էին, գնդակահարւեցին»,- ասաց մեր զրուցակիցը։

Մինասեանի խօսքով՝ պատմական զուգահեռներ անցկացնելիս այսօր ամենակարեւորը «Զանգեզուրի միջանցք»-ի գաղափարն իսպառ մերժելն է, որն այժմ էլ ընկած է պանթուրքիստական ծրագրի հիմքում։ Ըստ նրա՝ ոչ ոք դէմ չէ տրանսպորտային երթուղիների բացմանը, սակայն խնդիրն այն է, որ «Զանգեզուրի միջանցք»-ի գործարկումը թուրքերի կողմից մշակւած հայատեաց քաղաքականութեան առանցքային կէտերից է։ Պատմաբանի պնդմամբ՝ մենք պէտք է ի վերջոյ դասեր քաղենք պատմութիւնից, հզօրանանք, չվհատւենք եւ թոյլ չտանք նոր ագրեսիա։

**«168.am»**

## Գնահատանքի...

(Շար. 4-րդ էջից)

էր բոլոր միութիւնների եւ կազմակերպութիւնների կողմից, լաւագոյնը մատուցելու ուխտաւորներին։ Գագիկ Ջորջեանը անդրադարձաւ նաեւ պետական յարաբերութիւններին, որոնք Թեմական խորհուրդը իրականացրել էր յատկապէս Փոքրամասնութիւնների գրասենեակի եւ Չալդրանի կուսակալութեան։

Արտայայտւեց նաեւ Իրանի եկեղեցիների պահպանման կենտրոնի տնօրէն դոկտ. Շերլի Աւետեանը, շնորհակալութիւն յայտնելով այն քաջալերանքին եւ զօրակցութեանը, որը Ատրպատականի հայոց թեմը ցուցաբերում է իր եւ իր ներկայացրած կենտրոնի աշխատանքների դիւրացման համար։ Միշտ լաւատեսութեամբ նայելով ապագային, դոկտ. Աւետեանը յոյս յայտնեց, որ ուխտագնացութեան առաջիկայ 70-ամեակը, շատ աւելի շքեղ տեղի կունենայ։

Գնահատական խօսքերով հանդէս եկան նաեւ Վանքերի ուխտագնացութեան Գործադիր մարմնի անդամ Գագիկ Յարութիւնեանը, Հ.Մ.Ա.Կ.-ի Թաւրիզի մասնաճիւղի նախագահ Նժդեհ Աբրահամեանը, «Տաթեւ» պարային համոյթի պատասխանատու Նայիրի Դիլանեանը, «Կոմիտաս» երգչախմբի երաժիշտ ղեկավար Վարդան Վահրամեանը, նոյն խմբի անդամ Կարէն Սարգսեանը, որոնք բոլորն էլ բարձր գնահատեցին միութիւնների կատարած աշխատանքը, ի փառս Ս. Թադէի վանքի տօնին։

Սրբազան Հայրը գնահատանքի խօսք ուղղելով ներկայ շուրջ հարիւր հրաւիրեալներին, հերթով յիշեց հոգեւորականաց դասին, խորանին սպասարկող կիսասարկաւագաց եւ դպրաց դասերին, «Կոմիտաս» երգչախմբին, Վանքերի Ուխտագնացութեան յանձնախմբին, Խնամակալ մարմնին, Կարգապահների կազմին եւ Սկաուտներին, որոնք իրենց ներդրումը ունեցել էին ուխտագնացութեան բարեյաջող ընթացման գործում։ Սրբազան Հայրը գնահատանքով յիշեց նաեւ ազգային իշխանութեան անդամներին, որոնք յատկապէս ուխտագնացութեան օրերին, պետական յարաբերութիւնների միջոցով տնօրինումներ կատարել էին, ուխտաւոր ժողովրդի ապահովութիւնը հոգալով։

Սրբազան Հայրը յատկապէս յիշեց մեր ժողովրդի համար ներկայ դժւարին ժամանակահատւածը, շեշտելով մեր ունեցած արժէքները, սրբութիւններին տէր կանգնելու հրամայականը. «Մի բան կորցնելուց յետոյ դրա արժէքը իմանում ենք մենք։ Այսօր Իրանի Իսլամական Հանրապետութեան հովանու ներքոյ ծաղկուն վիճակում են գտնւում Ատրպատականի մեր թեմի վանքերը։ Նիւթական հսկայ ներդրում է կատարում կառավարութիւնը իր Մշակութային ժառանգութիւնների հիմնարկութեամբ, որպէսզի կանգուն մնան մեր վանքերը։ Աշխարհի կոյր աչքերի առջեւ, այլ վայրերում, մեր դարերի հնութիւն եղող վանքերն ու սրբատեղիները աւերւում են ու կործանւում։ Մենք ինչքան երախտապարտ պիտի լինենք այստեղ, որ մեր սրբավայրերը ոչ միայն յարգւում են եւ այցելւում, այլեւ վերանորոգւում ու պահպանւում, որպէս սրբազան աւանդ»,- ասաց Սրբազան Հայրը։

Նա իր խօսքի աւարտին մեծ ուրախութիւն յայտնեց, ասելով որ թէպէտ թւով քիչ, սակայն միասնական ջանքով հսկայական աշխատանք էին կատարել թեմի բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները. «Մէկ ընտանիքի հասկացութեամբ աշխատեցիք եւ հազար փառք Աստուծոյ, պատւով աւարտեցիք ձեր գործը, ե՛ւ հոգեւոր, ե՛ւ մշակութային, ե՛ւ ժողովրդական ծառայութեան առումով»,- եզրակցրեց Սրբազան Հայրը։

Թեմական խորհուրդը յատուկ նւէրներ էր նախատեսել յատկապէս երիտասարդութեան համար։ Արսինէ Բաբայեանը հերթաբար ընթերցեց ծառայութիւն մատուցած անհատների անունները, որոնք Սրբազան Հօր ձեռամբ ստացան իրենց նւէրը։ Այդ անհատների թւում էին, Կարգապահական կազմի անդամները, Սկաուտական կազմի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ խորանի վրայ ծառայութիւն մատուցած դպիրներն ու դպրուհիները։

Սրբազան Հայրը յատուկ նւէրներով պատւեց «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար Վարդան Վահրամեանին, դոկտ. Շերլի Աւետեանին եւ նրա ժրաջան օգնականներ Ալէն Գրիգորեանին եւ Կարէն Մկրտչեանին, Վանքերի ուխտագնացութեան Գործադիր յանձնախմբի երկար տարիների ատենապետ Ազատ Մատթէոսեանին, «Տաթեւ» եւ «Ակունք» պարախմբերի գեղարւեստական ղեկավար Կարինէ Մանուչերեանին, եւ համոյթի պատասխանատու Նայիրի Դիլանեանին, Կարգապահների պատասխանատու Բաբգէն Գասպարեանին, որոնք պանծացրին ուխտագնացութիւնը, իրենց կարեւոր դերակատարութեամբ։

Հոգեկան բաւարարութեան եւ ուխտագնացութեան բացառիկ առիթը վերյիշելու մի պահ հանդիսացաւ սոյն հաւաքը, առաջիկայ տարւայ համար նոր ծրագրերի մշակման եւս նպաստելով, փոխադարձ խորհրդակցութեան միջոցով։ Աւարտին հաւաքաբար երգւեց «Կիլիկիա» մաղթերգը եւ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եզրափակւեց երեկոն։

## «Հայկական...

(Շար. 3-րդ էջից)

ռադիոհեռուստաընկերութիւնը՝ «TRT»-ն, հրապարակել էր քարտէզ, որտեղ ներկայացւել է, այսպէս կոչւած, «Զանգեզուրի միջանցք»-ի հիմնական իմաստը՝ դա ոչ տնտեսականն է, ոչ էլ տարածաշրջանում խաղաղութիւնը, այլ դա «թուրքական աշխարհի» միաւորումն է։

Սաթիկ Սէյրանեանի «Պրեսսսինգ» հաղորդաշարի շրջանակում թուրքագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Վարուժան Գեղամեանը մանրամասնել էր.

«Թուրքական պետութիւնը 2020 թ. նոյեմբերի 9-ից յետոյ աշխատում է «Զանգեզուրի միջանցք»-ի ուղղութեամբ, վերջին ժամանակներում՝ գրեթէ ամենօրեայ ռեժիմով։ Այն անւանում են Թուրանի ճանապարհ։ Արցախի Հանրապետութիւնը չկայ, այն օկուպացւած է, մնում է ՀՀ Սիւնիքի մարզի 40 կմ. հատւածը, ինչպէս իրենք են ասում, «այդ անիծեալ սեպը»։ Խօսքը Մեղրիի հովտի մասին է։ «Զանգեզուրի միջանցք»-ը ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական նախագիծ է։ Սա, ի դէպ, հէնց Էրդողանն է ասել։ Թուրքերն այդ ճանապարհների համար փորձելու են ստանալ յատուկ կարգավիճակ։ Եթէ դա չստացւի, դիւանագիտական գործիքի փոխարէն՝ կը փորձեն օգտագործել ռազմական գործիքը»։

Այսինքն, Ալիեւի յայտարարութիւնը, որ ոչ թէ տանկերով են մտնելու «Զանգեզուր», այլ «խաղաղ» մեքենաներով, կամ Ալիեւի օգնականի պնդումները, թէ Սիւնիքը գրաւելու մտադրութիւն չունեն, դա լիովին չի չէզոքացնում Սիւնիքի ուղղութեամբ ռազմական էսկալացիայի հնարաւորութիւնը։

Այսինքն, եթէ Ադրբեջանը չկարողանայ ՀՀ-ի վրայ ճնշում գործադրելու կամ շանտաժի միջոցով դրան հասնել, ապա դիմելու է ուժի օգնութեանը։

Ի դէպ, ի՞նչ պակաս շանտաժ է, երբ մեզ ասում են, որ եթէ Հայաստանը չհամաձայնի «Զանգեզուրի միջանցք»-ին, Բաքուն այդ ծրագիրը կարող է իրականացնել Իրանի հետ։

Եւ այստեղ յանգում ենք այն մտքին, որի մասին մենք մեր յօդւածներում յաճախ ենք խօսում, այն, որ Իրանն ասում է, թէ թոյլ չի տայ տարածաշրջանում սահմանային փոփոխութիւն, դա դեռ չի նշանակում, որ Հայաստանն ապահովագրւած է կորուստներից, հարցն այն է՝ տւեալ պարագայում եւ տարածքում ո՛ւմ վերահսկողութեան շրջանակը կը մեծանայ՝ Ադրբեջանի՞, թէ՞, օրինակ, Իրանի։ Այո, Իրանը մէկ անգամ չէ, որ Թուրքիային ու Ադրբեջանին զգուշացրել է՝ չի հանդուրժի ռեգիոնալ քաղաքականութեան եւ պատմական սահմանների, մասնաւորապէս՝ հայ-իրանական տարանցիկ ճանապարհների որեւէ փոփոխութիւն։ Մէկ անգամ չէ, որ Իրանի Իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսը ցամաքային եւ ծովային զօրքերի զօրավարժութիւններ է անցկացրել Ադրբեջանի սահմանների շուրջ։ Սակայն, ինչպէս «168.am»-ի հետ հարցազրոյցներից մէկում նշել է «Յենակէտ» վերլուծական կենտրոնի փորձագէտ Շիրազ Խաչատրեանը, դա երաշխիք չէ այն բանի, որ ՀՀ-ն ամէն անգամ մանր-մանր տարածքային կորուստներ չի ունենայ, ադրբեջանական վերահսկողութիւնը չի մեծանայ, իսկ այդ ընթացքում Իրանն էլ չի յայտնի երկընտրանքի առաջ՝ միջամտե՞լ, թէ՞ ոչ։

Ի դէպ, ՌԴ փոխվարչապետ Ալեքսէյ Ովերչուկը յայտարարել է, որ Հայաստանը «Հիւսիս-Հարաւ» միջանցքի մաս չէ, քանի որ մինչ այժմ վերջնական դիրքորոշում չի ձեւաւորել Մեղրիով ճանապարհի վերաբերեալ։

«Ինչ վերաբերում է Հիւսիս-Հարաւին, ապա այստեղ փոխգործակցութիւնը միանգամայն նորմալ է կազմակերպւում։ Բացի այդ, դուք գիտէք, որ Ադրբեջանն ու Իրանը փաստացի արդէն սկսել են աւտոմոբիլային ճանապարհի կառուցումը, որը կանցնի Արազ գետի հարաւային ափով՝ շրջանցելով Հայաստանը, եւ փաստացի ստորագրել են յուշագիր Իրանի՝ տարածքով երկաթուղու կառուցման մասին՝ Հայաստանը շրջանցելով, այն պարզապէս գետի միւս ափով կանցնի»,- շարունակել է Ովերչուկը՝ յաւելելով, որ Իրանի տարածքով դէպի Նախիջեւան շրջանցող ճանապարհի կառուցման տարբերակը Թուրքիայի հետ սահմանից ելքով փոքր-ինչ տարբերւում է «Զանգեզուրով անցնող ճանապարհից»։

«Որքան գիտեմ, գնահատել են, որ հայկական տարածքով երկաթուղին կը լինի 42 կմ., իսկ իրանական տարածքով երկաթուղին մօտ 50 կմ. է։ Ահա եւ ամբողջ տարբերութիւնը. երկու կամուրջ եւ 8 կմ., 1520 (ուղի) եւ այնտեղ, եւ այստեղ»,- նշել է Ովերչուկը։

Երբ Նիկոլ Փաշինեանն ապաշրջափակման համատեքստում խօսում է ինքնիշխանութեան եւ դրա պաշտպանութեան մասին, յիշում ենք նաեւ 2020 թւականի նոյեմբերի 9-10-ի եռակողմ յայտարարութեան նախնական տարբերակի ապաշրջափակման մասին կէտի խմբագրումը, որի մասին «168.am»-ը գրել էր, երբ Հայաստանի Հանրապետութիւնը, Ադրբեջանի Հանրապետութեան արեւմտեան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան միջեւ տրանսպորտային հաղորդակցութիւնն ապահովողից դարձել էր երաշխաւորող։

Առաջին հայեացքից գուցէ որոշ դէպքերում երաշխաւորելն ու ապահովելը կարելի է հոմանիշներ համարել, բայց տողատակում դրանք նաեւ այլ գործողութիւններ են պարունակում, եւ այլ, այսպէս ասած, դերակատարում։

Մնում է յուսալ, որ Նիկոլ Փաշինեանի՝ «Խաղաղութեան խաչմերուկը» մի օր չի դառնայ «Պատերազմի խաչմերուկ», յետոյ՝ «Փըրկութեան»։

**«168.am»**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԱՐՄԵՆՈՒՀԻ ՇԱՄԻՐԵԱՆԻ**
**(ԱԲՆՈՒՍԵԱՆ)**

ցաւալի մահւան առաջին փարելիցի առթիւ՝ ուրբաթ, նոյեմբերի 3-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Արաքս, Թոմիկ եւ Թաղէ Յարութիւնեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:

Ծովինար, Ռոբերտ, Անի եւ Թալին Ալլահվերդեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռները:

Սեւան, Էդնա եւ Էմմանուէլ Աբնուսեաններ՝ որդին, հարսը եւ թոռը:

Արմինէ Աբնուսեան՝ դուստրը:

Արազ եւ Էրիկ Սիրոյեաններ՝ թոռը եւ թոռան ամուսինը:

Շամիրեան եւ Աբնուսեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Բարձր հովանաւորութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Գեր2. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանի**

**Հ. Մ. «Սարդարապատ» միութեան վարչութիւնը իր միութեան հիմնադրման եւ գործունէութեան 40-ամեակի առիթով**

դիմում է բոլոր ազգային մարմիններին, կառոյցներին միութենականներին եւ հայրենակիցներին, ցանկութեան պարագային, իրենց ուղերձները մինչեւ թւականիս

**նոյեմբերի 25-ը յղեն 09 120425 10 1 կամ 090 1420709 1 հեռախօսահամարներին WhatsApp-ին կամ 8840342 1 միութեան գրասենեակին:**

**ՅԱՐԳԱՆՕՔ՝**
**Հ. Մ. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւնն ենք յայտնում՝ Շաքէ, Հերմինէ եւ Վահէ Նազարբէգեաններին, Ղադիմեան եւ Նազարբէգեան ընտանիքներին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՓԱՌՔՈՒՀԻ ՂԱԴԻՄԵԱՆԻ**
**(ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆ)**

ցաւալի մահւան առթիւ:

**ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ ԵՒ ԱԼԵՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ**

ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

آگهی استخدام
به یک نفر کارگر ساده در
کارخانه ای واقع در کیلومتر ۹ جاده مخصوص کرج
نیازمندیم.
۰۹۱۲۵۷۰۲۲۰۳

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰


7 STARS
آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی

خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :
✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների
հերթագրման ապահովում
✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان
09303810625 WhatsApp tel: 021-88796742-3
QeshmAir
IRAN AIRTOUR AIRLINES
VARESH AIRLINES هواپیمایی وارش
Armenia airways

7setaretours

مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir

دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով
دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4
نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537 •
واتساپ 09366955599
اینستاگرام @Didarseiregity
دفتر ایروان
خیابان نالباندیان – شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237
Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով


# ՄԱՀԱԶԴ

Հայ Ճարտարապետների եւ Ճարտարագէտների Միութիւն

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին`



## ՃՐՏԳ. ՐԱՖՖԻ ԳԱԼՈՒՍՏԱՆԵԱՆԻ

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ շաբաթ, հոկփեմբերի 28-ին:

Թաղումը կը կափարուի չորեքշաբթի, նոյեմբերի 1-ին, ժամը 15:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

**ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՒ ՃԱՐՏԱՐԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ**

# ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին`



## ԹԱԳՈՒՇ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ (ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ)

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ երկուշաբթի, հոկփեմբերի 30-ին:

Թաղումը կը կափարուի չորեքշաբթի, նոյեմբերի 1-ին, ժամը 14:30-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցաւակցութիւնները` գերեզմանափանը եւ հանգուցեալի որդու բնակարանում:

**ՀԱՍՑԷ՝**

Բահար Շիրազ պող., Ջաւադնիա պող., Արեւելեան Իսար փողոց, համար 34, 2-րդ զանգ:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Գառնիկ եւ Անեփ, Ժորժիկ եւ Քաթրին, Արմիկ եւ Արմինէ Յարութիւնեաններ` որդիները եւ հարսները` ընփանեօք:

Էմմա Սեփեան` հարսը` ընփանեօք:

Վահէ Յարութիւնեան` թոռը` ընփանեօք:

Մարգար Կարապեփեան` եղբայրը` ընփանեօք:

Ժակլին Կարապեփեան` եղբօր կինը` ընփանեօք:

Սեդա եւ Վաչիկ Աբրամեաններ` քոյրը եւ իր ամուսինը` ընփանեօք:

Ժորժիկ Տէր-Աւագեան` քրոջ ամուսինը` ընփանեօք:

Արզումանեան, Օհանջանեան, Ներսիսեան, Միրբէգեան, Սեփանեան, Ղուկասեան, Սեֆեան, Սարգսեան, Դաւթեան եւ Միրզախանեան ընփանիքներ` հարազափները եւ խնամիները:

Երկու տարբեր թռիչքներ դէպի` Հայաստան
Թեհրան - Երեւան - Թեհրան
IRAN AIRTOUR AIRLINES هواپیمایی ایران ایرتور
Qeshm Air هواپیمایی قشم
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
Sati ستی
agency@sati-co.com ۹ -۸۸۵۴۱۲۹۸ و ۵-۸۸۵۴۱۲۴۲-۰۲۱
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «نازبه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

«Արարատ»
Ամէն փեսակ փնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.` 88523388

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.` 88594063 եւ 09 12 11932 12

# Յաւերժական Մեսսի

## Լէոն` «Ballon d’Or»-ի ութակի դափնեկիր



«ԱԼԻՔ» - Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հաւաքականի եւ ամերիկեան «Ինտեր Մայամի»-ի 36-ամեայ յարձակւող Լիոնէլ Մեսսին 8-րդ անգամ արժանացաւ «France Football»-ի աշխարհի լաւագոյն ֆուտբոլիստի «Ոսկէ գնդակ» մրցանակին:

Անցած մրցաշրջանում Մեսսին Արգենտինայի հաւաքականի հետ նուաճեց աշխարհի գաւաթը, իսկ ֆրանսիական «Պարի Սէն-Ժերմէն»-ի հետ դարձաւ Ֆրանսիայի չեմպիոն:

«Ոսկէ գնդակ»-ի լաւագոյն տասնեակում են նորուեգացի Էրլինգ Հոլանդը («Մանչեստեր Սիտի», Նորուեգիա), Կիլիան Մբապէն (ՊՍԺ, Ֆրանսիա), Կեւին Դէ Բրոյնէն («Մանչեստեր Սիտի», Բելգիա), Ռոդրին («Մանչեստեր Սիտի», Իսպանիա), Վինիսիուս Ժունիորը («Ռէալ Մադրիդ», Բրազիլիա), Խուլիան Ալվարէսը («Մանչեսթեր Սիթի», Արգենտինա), Վիկտոր Օսիմէնը («Նապոլի», Նիգերիա), Բերնարդու Սիլվան («Մանչեստեր Սիտի», Պորտուգալիա), Լուկա Մոդրիչը («Ռէալ Մադրիդ», Խրուաթիա):

Էրլինգ Հոլանդն արժանացաւ 2022-2023 մրցաշրջանում գերմանացի Գերդ Միւլերի անուան աշխարհի լաւագոյն ռմբարկուի մրցանակին:

2022-2023 թւականների մրցաշրջանում ռուս Լեւ Եաշինի անուան աշխարհի լաւագոյն դարպասապահի մրցանակը բաժին հասաւ Արգենտինայի հաւաքականի եւ անգլիական «Աստոն Վիլա»-ի դարպասապահ Էմիլիանօ Մարտինէսին:

Անգլիայի հաւաքականի եւ «Ռէալ Մադրիդ»-ի 20-ամեայ կիսապաշտպան Ջուդ Բելինգէմն էլ արժանացաւ 2022-2023 մրցաշրջանում ֆրանսիացի Ռայմոն Կոպայի անուան աշխարհի լաւագոյն երիտասարդ ֆուտբոլիստի (մինչեւ 21 տարեկան) մրցանակին:

2022-2023 մրցաշրջանում աշխարհի լաւագոյն կին ֆուտբոլիստ ճանաչուեց Իսպանիայի ազգային հաւաքականի եւ «Բարսելոնա»-ի ֆուտբոլիստուհի Այտանա Բոնմատին:

# Նաթանիահուն խուսափել է պատասխանել իր հրաժարականի մասին հարցին



«ԱԼԻՔ» - Սիոնիստական ռեժիմի վարչապետ Բենիամին Նաթանիահուն երէկ` երեկոյեան մամլոյ ասուլիսի ընթացքում խուսափել է պատասխանել իր հրաժարականի հաւանականութեան վերաբերեալ հարցին:

Նա շեշտել է, որ ներկայ դրութեամբ ամբողջովին կենտրոնացած է Գազայի հատուածում ռազմական գործողութիւնների վրայ: «Մէկը, ում ես մտադիր եմ ստիպել հրաժարական տալ ՀԱՄԱՍ-ն է: Սա իմ նպատակն է, սա իմ պատասխանատուութիւնն է»,- ասել է նա` պատասխանելով հարցին, թէ արդեօք դիտարկում է իր հրաժարականի հարցը` հաշւի առնելով իր ղեկավարած կառավարութեան ժողովրդականութեան անկումը:

Սիոնիստական ռեժիմի վարչապետը յստակեցրել է նաեւ, որ չի համաձայնի ՀԱՄԱՍ-ի հետ հրադադարի հաստատմանը:

«Ուզում եմ յստակեցնել Իսրայէլի դիրքորոշումը հրադադարի վերաբերեալ: Ինչպէս ԱՄՆ-ը չհամաձայնեց հրադադար կնքել Փերլ Հարբորի ռմբակոծութիւնից կամ սեպտեմբերի 11-ից յետոյ, այնպէս էլ Իսրայէլը չի համաձայնի դադարեցնել ռազմական գործողութիւնները ՀԱՄԱՍ-ի դէմ հոկտեմբերի 7-ի սարսափելի յարձակումից յետոյ»,- նշել է Նաթանիահուն:

## ՎՐԻՊԱԿ

*Թերթիս հոկտեմբերի 29-ի համարի, 3-րդ էջում տպագրուած հարցազրոյցի վերնագրում թոյլ է տրուել վրիպակ:*

*Վերնագիրը կարդալ հետեւալ կերպ` «Ընդդիմութեան քննադատութիւնը **չպէտք է** վերածի ընդդիմութեան հնարաւորութիւնները, ռեսուրսները, եւ օգտակար գործունէութեան գործառոյթը նուազեցնելուն»:*

*«ԱԼԻՔ»*

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

املاک هنرمندان
بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۷۷– ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ....

(Շար. 1-ին էջից)

այս տեսանկիւնից հարկաւոր է ձեւակերպել հարցը, նախ հասկանալու համար, թէ ինչ է ուզում Արցախի իշխանութիւնը եւ ինչ են ցանկանում ռեգիոնալ պետութիւնները, բայց այստեղ ամենակարեւոր նշանակութիւնը ունի Հայաստանի գործող իշխանութիւնը, որովհետեւ Հայաստանի գործող իշխանութիւնների որդեգրած դիրքորոշումների դէպքում անհնար է պատկերացնել, որ Արցախի հարցը միջազգային օրակարգ դուրս կը գայ:

**ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ**

## «Գազայի....

(Շար. 1-ին էջից)

Փորձագէտն անդրադառնալով ՀԱՄԱՍ-ի եւ Գազայում իրականացող սպանդի վերաբերեալ Թուրքիայի վարչապետի իրարամերժ յայտարարութիւններին, յաւելել է. «Չնայած սիոնիստական ռեժիմի հասցէին ուղղուած քննադատութեանն ու Գազայի համար նրա թափած կոկորդիլոսի արցունքներին, Էրդողանը պատրաստ չէ դադարեցնել նաւթի տեղափոխումը, քանի որ ցանկանում է միջնորդելով Իսրայէլի հսկողութեան տակ գտնւող Լեւիաթան հանքահորից արտահանւող գազը Թուրքիայից տեղափոխել Եւրոպա»:

## «ԱՄՆ-ի դէմ....

(Շար. 1-ին էջից)

սխալ ու անհիմն քայլ է»:

Ասուլիսի այլ բաժնում Իրանի արտաքին գործերի նախարարը ընդգծել է. «Մենք չենք ձգտում եւ չենք ձգտել տարածաշրջանում ընդլայնել պատերազմը: ՄԱԿ-ում իմ ելոյթում ես ասացի, որ հէնց Իսրայէլի ռեժիմն է պատերազմ եւ անապահովութիւն պարտադրել մեր տարածաշրջանին: Իրանի Իսլամական Հանրապետութիւնը միշտ էլ տարածաշրջանում խաղաղութեան ջատագոփ է եղել: Շեշտում եմ, որ Գազայում պաղեստինցի խաղաղ բնակիչների շարունակական սպանդը եւ Իսրայէլին ԱՄՆ-ի ցուցաբերած լիակատար աջակցութիւնը սիոնիստական ռեժիմին խրախուսել են աւելի շատ սպանդի: Իսրայէլի անվտանգութեան եւ քաղաքական համակարգը փլուզել է, եւ գործում է միայն իսրայէլական ռազմական մեքենան, իհարկէ` ԱՄՆ-ի լիակատար աջակցութեամբ»: